

# Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Թ. — ՇՐՋԱՆ ԻԲ. 1890 ՏԱՐԻ ԻԳ. ՍԵՊՏԵՄ. 30

## ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

## ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՈՆԻ

*Ներկայ 1890 տարւոյ Սեպտեմ. 30ին ի տօնի Վարագայ Ս. խաչի՝ ըստ յաջողելոյ Տեառն Աստուծոյ՝ Վեհափառ և Սրբազնագոյն Կաթուղիկոսն ամենայն Հայոց Տ. ՄԱԿԱՐ մտադրեալ է Ս. Միւռոն օրհնել:*

*Ս. Միւռոնի օրհնութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ նուիրական արարողութիւններից առաջինն լինելով, Վեհ. Հայրապետը բարեհաճեցաւ կանխաւ ի լուր ամենեցուն հրատարակել, որպէս զի ցանկացող բարեպաշտ հոգևորականք և աշխարհականք ըստ նախնի սովորութեան ի ժամանակին ժամանեն ի Մայր Աթոռս և վայելեն Ս. Միւռոնի օրհնութեան շնորհը:*